# ԱԶԳԱՅԻՆ

Ամսիս 24-ին Ս. Գայանէի վանքում Ամենապատիւ Տէր Տեղապահ բարձր Սրբազան Երեմիա եպիսկոպոսի հրամանով Յարութիւն Տէր Մկրտչեանց և ճեմարանի ուսուցիչ փարսադան Տէր Մովսէսեանց ստացան դպրութեան և աւագ սարկաւագութեան աստիճան Գեր. Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի ձեռնադրութեամբ և նոյն ամսի 25-ին կիւրակէ օրը Մայր Աթոռիս միաբան բարեշնորհ Գէորգ Մուրադեանց և Սիմեօն Խըլըրճեանց սարկաւագները հետ ընդունեցին կուսակրօն քահանայութեան աստիճան։ Գէորգը անուանուեց Եղիշէ. Սիմէօնն—Արսէն, Յարութիւնը Մխիթար, փարսադանը—Մեսրոպ։ Նոյն երեկոյեան նորընծաները ստացան վեղար։ Կբարեմաղթեմք, որ Հոգին սուրբ Աստուած իւր առատաղեղ շնորհօքն զօրացնի և Մշակ առանց ամօթոյ անի նորանց հայ եկեղեցու և ազգիս համար, տայ Աստուած, որ օրըստօրէ աւելանայ այդպիսի արժանաւոր հոգևորականների թիւը։

---

## I.

## ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

### ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՒՈՒ 1891 ԵՒ 1892 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻ

### ՄՈՒՏՔ

| | Ր. | Կ. | Ր. | Կ. |
|---|---|---|---|---|
| Մնացորդ նախորդ տարուայ՝ . . . . | 86 | 78. | 88 | 39 |
| Ժողովածութիւնից՝ հատով ծախուած . . | 818 | 49. | 1207 | 99 |
| « » Գունտով վաճառուած . | 367 | 68. | 744 | 51 |